ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ municipalityofcharentsavan@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» սեպտեմբերի 2023 թվականի N 1111

ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ին անցկացվելիք երկրորդ նստաշրջանի թիվ 1 հերթական նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողովներ.

1.1 ***Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով՝***

•/Նախագիծ N 70-Ն/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

•/Նախագիծ N 72-Ն/ Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

•/Նախագիծ N 75-Ն/ Չարենցավան համայնքի սեփականություն համարվող փողոցային լուսավորության համակարգի հենասյուներից օգտվելու վարձավճար սահմանելու մասին:

1.2 ***Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝***

•/Նախագիծ N 68-Ա/ Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

•/Նախագիծ N 73-Ա/ Չարենցավան համայնքում ավտոտնակների կառուցման համար հողահատկացումները սահմանափակելու և կանոնակարգելու մասին:

1.3 ***Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով***

•/Նախագիծ N 69-Ա/ Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 78–Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

•/Նախագիծ N 71-Ա/ Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

1.4. Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողով՝

•/Նախագիծ N 74-Ա/ Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 5-ի թիվ 37 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

•/Նախագիծ N 76-Ա/ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի թիվ 2-րդ հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ